ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԲԱԳՐԱՏՅԱՆ Բ. Ս.

Պառլամենտը պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմին է: «Պառլամենտ» եզրույթը բնորոշվում է որպես բազմանդամ կազմ ունեցող ընտրովի մարմին, որն ինքնուրույն է իշխանության մյուս մարմինների նկատմամբ, և որի անդամներն ունեն հավասար կարգավիճակ[1]:

Պառլամենտի ինստիտուտի կայացումը շատ երկրներում տեղի է ունեցել XIX դարում: Օրինակ՝ Ֆրանսիայում այն վերջնական հաստատվեց XIX դարի 70-ական թթ.: XIX դարի վերջին քառորդում նույնը տեղի ունեցավ Գերմանիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում, Ավստրո-Հունգարիայում, Բելգիայում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պառլամենտի ինստիտուտը կարիք ուներ վերակազմավորման ու ամրակայման, ուստի մի շարք երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, ներմուծվում է կառավարության հրաժարականի այնպիսի մեխանիզմ, երբ անվստահություն հայտնելու դեպքում կառավարությունը հրաժարական էր տալիս միայն նոր կազմը հաստատելուց հետո:

Ռուսաստանում պառլամենտի ինստիտուտի երևույթը ի հայտ եկավ 1906-1907 թթ. և կապված էր Պետական դումայի գործառության հետ: Այդ համակարգը իշխանության եկած բոլշևիկների կուսակցությունը դիտարկում էր որպես «բուրժուական ժողովրդավարության» դրսևորում և շուտով դուրս մղվեց պետական կառավարման համակարգից: Այն սկսեց գործառվել միայն Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանից՝ 1990-ական թվականներից, և դիտարկվեց ոչ միայն որպես կառավարման պառլամենտական ձև, այլև որպես անկախ, օրենսդիր իշխանության գործառության համակարգ: Հետխորհրդային անկախ պետականության ստեղծման այս փուլին էր շուտով հաջորդեց նախագահական կառավարման ձևը[2]:

Հայաստանի Հանրապետության հետխորհրդային պետականաշինության ընթացքը նույնպես հանգեցնում է պետական իշխանության եռամաս տարանջատման՝ ըստ «պառլամենտ-կառավարություն-դատարան» փոխկապված ու փոխադարձ հավասարակշռող պետական կառույցների:

---

[1] **Зеленков М. Ю.** *Политология для юристов, М., 2000, с. 60-61.*

[2] **Гранкин И. В.** *Парламент в России, М., 1999, с. 21-29.*

Պառլամենտի ինստիտուտը պետականաշինության այնպիսի համակարգ է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր գործառույթների հստակ տարբերակումով՝ օրենսդիր մարմնի՝ ի դեմս պառլամենտի, մյուս պետական մարմինների նկատմամբ առաջնահերթության սկզբունքով[3]: Ընդհանուր առմամբ, այս ինստիտուտը ներկայանում է երեք հիմնարար սկզբունքներով՝

➢ Ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի կենտրոնական դիրքն արտահայտվում է պետության ներքին և արտաքին քաղաքականության ուղենշման մեջ:

➢ Կառավարությունը ձևավորվում է ղեկավարող քաղաքական կուսակցության կամ կոալիցիայի միջոցով, որը պառլամենտում կազմում է մեծամասնություն:

➢ Կառավարությունը պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև: Կառավարության անբավարար գործունեության պարագայում պառլամենտը կարող է անվստահություն հայտնել ամբողջ կառավարությանը կամ որևէ նախարարի և պահանջել նրա հրաժարականը[4]:

Հայաստանի Հանրապետությունում պառլամենտի գործունեության հիմնարար սկզբունքներն ամրագրված են 1995 թ. ընդունված Սահմանադրության մեջ, որոնք որոշակի փոփոխությունների են ենթարկվել 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո[5]:

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված են պառլամենտի հիմնական լիազորությունները, որոնք կազմում են պառլամենտի սահմանադրական կարգավիճակի հիմքը և նպաստում պառլամենտական ժողովրդավարության հաստատմանը, պառլամենտի ինստիտուտի ամրապնդմանը:

Հ. Հակոբյանը փաստում է ՀՀ պառլամենտի սահմանադրական կարգավիճակի հետևյալ կետերը.

1. այն առավելություն չունի իշխանության մյուս թևերի նկատմամբ, պառլամենտն իշխանության մի մասն է, գործում է անկախ և իրականացնում սահմանադրորեն ամրագրված իր գործառույթները՝ օրենսդրական լիազորությունները.

2. չի կարող պետությանը, հասարակությանը վերաբերող որևէ հարց քննարկել և որոշում կայացնել.

3. վերահսկողություն է իրականացնում կառավարության նկատմամբ և որոշակի առումով հակակշիռ դառնում նրան.

---

[3] Общая и прикладная политология: учебное пособие /Под ред. В. И. Жукова, Б. И. Краснова, М., 1997, с. 33-42.

[4] Паречина С. Г. Теории государственной власти, М., 2002, с. 6.

[5] ՀՀ Սահմանադրություն, 62-84 հոդվածներ:

4. ընտրությունների միջոցով ձևավորված, մշտական գործող, պրոֆեսիոնալ մարմին է[6]:

Հեղինակը իրավամբ նշում է, որ պառլամենտը գործող ինստիտուտ է դառնում, եթե օրենքների ընդունման բացառիկ իրավունքը պատկանում է պառլամենտին, եթե այն ձևավորում է կառավարություն կամ մասնակցում վարչապետի նշանակմանը, եթե կառավարությունը սահմանադրական, քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև: Այն, որպես համակարգ, լիովին կարող է գործել, եթե իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա հավասարակշռության և հակակշիռների կառուցակարգերի պայմաններում համաչափ գործում են իշխանության երեք ճյուղերը[7]:

Պառլամենտն իր գործառույթների իրագործման նպատակով լիազորվում է անհրաժեշտ իրավասություններով: Ըստ այդմ՝ պառլամենտները կարելի է բաժանել երեք խմբի.

1. Բացարձակ որոշակի իրավասություն ունեցող պառլամենտներ. բնութագրական են դաշնային և ապակենտրոնացված ունիտար պետությունների համար: Այդ պետություններում կենտրոնական իշխանությունը սահմանադրորեն սահմանափակված է դաշնության սուբյեկտների իրավունքներով: Նման օրինակներ են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Իսպանիայի պառլամենտները:

2. Բացարձակ անորոշ իրավասություն ունեցող պառլամենտ-ներ, որոնք իրավունք ունեն օրենքներ ընդունելու ցանկացած հարցի շուրջ: Այս խմբի լավագույն օրինակն է Մեծ Բրիտանիայի պառլամենտը: Դեռ XII դարում հաստատվել է Անգլիայի պառլամենտի գերակայության սկզբունքը՝ որպես բարձրագույն օրենսդիր մարմնի: Պառլամենտն իրավունք ուներ ընդունելու կամ փոփոխելու ցանկացած օրենք, և իշխանության որևէ այլ մարմին չէր կարող չեղյալ համարել այն: Տվյալ խմբին են դասվում նաև Նոր Զելանդիայի, Ճապոնիայի, Իտալիայի և Իռլանդիայի պառլամենտները:

3. Համեմատաբար որոշակի իրավասություն ունեցող պառլամենտներ, որոնց իրավասությունների սահմանները ավելի ճկուն են: Այսպես՝ Շվեյցարիայի Սահմանադրությունը չի պարունակում պառլամենտի և կառավարության իրավասությունների հստակ տարանջատում: Սահմանադրության տարբեր հոդվածներ աննշան տարբերություններով նմանատիպ

---

[6] **Հակոբյան Հ.,** *Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2007, էջ 48:*

[7] *Նույն տեղում, էջ 67:*

իրավասություններ են վերագրում թե՛ Դաշնային ժողովին, և թե՛ Դաշնային խորհրդին[8]:

Այժմ դիտարկենք պառլամենտների հիմնական իրավասությունները:

Օրենսդիր իրավասությունները պառլամենտների իրավասությունների հիմնական մասն են: Այդ իրավասությունների իրագործումը պառլամենտների գործունեության հիմքն են: Օրենսդիր իշխանությունն արտահայտվում է ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի միջոցով: Պառլամենտի ինստիտուտի կայացման փուլում օրենսդիր իրավասության առկայությունը պետականաշինության հիմքն է, սակայն ներկայիս հասարակություններում պառլամենտին չի կարելի միանշանակ վերագրել օրենսդիր իշխանության գործառույթը, քանի որ երկրների գերակշռող մասը ցուցադրում է պառլամենտի գործունեության այնպիսի պատկեր, երբ չի պահպանվում օրինաստեղծ գործառույթի բացարձակ իրավունքը: Պառլամենտի բացառիկ իրավասություն է դիտարկվում օրինաստեղծ ակտերի ընդունումը: Այն կա՛մ գործառվում է պառլամենտին հատուկ իրավասությունների շնորհիվ, կա՛մ ուղղվում է նրան գործադիր իշխանության կողմից, ուստի այժմ դժվար է խոսել իշխանությունների բացարձակ բաժանման մասին[9]:

Ընդհանուր առմամբ, պառլամենտի՝ սահմանադրությամբ ամրագրված օրենսդիր իրավասություններն են՝

1. օրինաստեղծ նախաձեռնության իրավունքը.

2. օրինագծերի ընդունումը.

3. բյուջեի ընդունումը և այլ ֆինանսական իրավասությունները[10]:

Պառլամենտի վերահսկողական իրավասությունը սովորաբար վերաբերում է գործադիր իշխանությանը, սակայն կարող է տարածվել և դատական իշխանության կամ զինված ուժերի վրա[11]: Գործադիր իշխանության վերահսկողությունը կրում է քաղաքական բնույթ, թեև իրագործվում է իրավաբանական լծակներով: Այլ խոսքով՝ պառլամենտի հիմնական վերահսկողության առարկան կառավարության քաղաքական գործունեությունն է[12]:

Այսպիսով, Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով ամրագրված են պետական իշխանության մարմինների գործունեության սկզբունքները, կազմակերպման ձևերը, փոխհարաբերությունները: Հ. Հակոբյանը առանձնահատուկ կարևորում է պետական իշխանության

---

[8] **Чиркин В. Е.** *Конституционное право зарубежных стран, М., 1997, с. 63-64.*

[9] **Vile M. J.** *Constitutionalism and the Separation of Powers, Oxford, 1967, p. 31-36.*

[10] **Чиркин В. Е.,** *նշվ աշխ., էջ 71-73:*

[11] **Страшун Б. А.** *Конституционное (государственное) право зарубеж-ных стран, М., 1997, с. 101.*

[12] *Նույն տեղում, էջ 111-112:*

մարմինների կազմակերպման ձևերի և գործունեության սկզբունքների գիտատեսական վերլուծության ընթացքում երկրի զարգացման պատմական պայմանների, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի, մշակութային առանձնահատկությունների, ավանդույթների, սովորույթների, պառլամենտական գործունեության փորձի, ժողովրդավարության զարգացման աստիճանի և պառլամենտի ինստիտուտի կայացման ընթացքի ուսումնասիրումը[13]:

Յու. Դմիտրիևը և Ե. Չերկաշինը, խոսելով պառլամենտի զարգացման մասին, նույնպես մատնանշում են ավանդույթների կարևորությունը: Պատմական ավանդույթները քաղաքական մշակույթի մասն են: Դրանք մասնավորապես կապված են լինում պառլամենտարիզմի զարգացման առանձնահատկությունների հետ: Այլ խոսքով՝ երկրի օրենսդիր մարմնի կազմավորման և զարգացման որոշակի պայմանները ձևավորվում են պատմական որոշակի իրողությունների ազդեցության տակ և ամրակայվում են քաղաքական մշակույթի համալիր կառուցվածքում[14]:

Հ. Հակոբյանի համոզմամբ՝ պառլամենտի ինստիտուտը լոկ ներկայացուցչական մարմնի առկայություն կամ օրինաստեղծ աշխատանքի տեխնոլոգիան չէ: Այն հասարակական փոխհամաձայնության մշակույթ է և ենթադրում է պառլամենտական ժողովրդավարության անհրաժեշտ և բավարար միջավայրի առկայություն: Պառլամենտի ինստիտուտն իր հերթին ներկայացնում է քաղաքական ուժերի իրավական, ժողովրդավարական փոխհարաբերությունների մի համակարգ, երբ առկա է օրինական ընտրություններով ձևավորված պառլամենտ, որտեղ թե՛ քաղաքական մեծամասնությունը և թե՛ քաղաքական փոքրամասնությունն օբյեկտիվ անհրաժեշտություն են և գործում են սահմանադրական հստակ իրաասությունների շրջանակում՝ իրականացնելով ժողովրդից պատվիրակված իշխանական լիազորություններ[15]:

Պառլամենտի ինստիտուտի իրավասությունների վերլուծությունը արժևորվում է պետականաշինության զարգացման միտումների ուղենշման առումով՝ ապահովելու համար պետական կառավարման մարմինների կենսագործունեության ժամանակակից պահանջները:

---

[13] **Հակոբյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 67:*

[14] **Дмитриев Ю. О., Черкашин Е. Ю.** *Законодательные органы России от Новгородского вече до Федерального собрания (Сложный путь от патриархальной традиции к цивилизации), М., 1994, с. 58-64.*

[15] **Հակոբյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 68-69;* **Խաչատրյան Հ.,** *Պառլամենտ և պատգամավոր, Ե., 1994, էջ 12-19*

ИНСТИТУТ ПАРЛАМЕНТА В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ

БАГРАТЯН Б. С.

Резюме

Во многих странах институт парламента окончательно сформировался в XIX в., в частности, во Франции (70-е годы XIX в.), в Германии, Щвейцарии, Испании, Португалии, Италии и Бельгии (в последней четверти XIX в.). В России институт парламента был создан в 1906-1907 гг. в связи с функционированием Государственной думы. Постсоветский период становления армянской государственности привел к разделению государственной власти на тройственную систему – «парламент – правительство – суд», представляющую собой взаимосвязанные и сбалансированные государственные структуры. Институт парламента являет собой такую систему становления государственности, которая характеризуется принципом первоочередности законодательного органа–парламента, по отношению к другим государственым органам. Исследование политологических особенностей термина "парламент" и надлежащих правомочий института парламента имеет важное значение в процессе определения тенденций развития системы становления и обустройства государства для обеспечения современных требований жизнедеятельности государственных органов.

INSTITUTE OF PARLIAMENT IN THE PROCESS OF STATE-BUILDING

B. BAGRATYAN

Abstract

Formation of the institute of parliament in many countries took place in the 19th century. For example, in France institute of parliament was finally established in 1870s. The same process took place in the last quarter of the 19th century in Germany, Switzerland, Spain, Portugal, Italy and Belgium. In Russia appearance of the institute of parliament was in 1906-1907 dealt with the functioning of State Duma. The post-soviet period of the Armenian state-building system led to the separation of powers as “Parliament, Executive and Judiciary” system in the capacity of the interconnected and balanced state structures. Institute of parliament is presented as a system of state-building, which is defined through the principle of legislature priority. The research of the political features of the term “parliament” and its competent authorities has an important meaning for the definition of state-building development trends and ensuring the contemporary requirements of state bodies activity.